



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևա նյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՇԹՅԵՆՈՂԹՅԱՅ ԱԺՑՈՂԾԻԽԱԾ ՑԱՇԱՍԱԿԱԾՈՅ ՀԱ ՑԱՇՈՒԵԱԾՈՅԹԱ ՑԵՍԱԿՅՑ
Աշխ. Ենթ Խաճաղեա յամօսեահու Խաճաղու և ըյանոմօշու Խաճաղու Խաճաղու ՑԱՇՈՒԵԱԾՈՅԹԱ ՑԵՍԱԿՅՑ

ՎՈՐՈՇՈՒՄ

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՅԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

[Վ.ԿԳԿ յոլ Վ.ՍԽՀ ձկն 1931 թ. ապրիլի 3-ին Վ.ՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 6, Խոդ. 71) *]
Մինչեւ 1933 թ. մայիսի 31-ը փոփոխություններով]:

Ա.ՍՖԽԽՀ տեղական ֆինանսների մասին կանոնադրության 57-րդ հոդվածի համաձայն, վար հաստատված և Անդրկովկասյան Կենտրոնական Գործադրի Կոմիտեյի և Ա.ՍՖԽԽՀ ժողովրդական Կոմիտարների Խորհրդի 1926 թ. սուբստուքի թ-ի գորոշումով (Ա.ՍՖԽԽՀ Ո. Ժ. 1926 թ. № 8, հոդ. 697), Համավրացական Կենտրոնական Գործադրի Կոմիտեն և Վ.ՍԽՀ ժողովրդական Կոմիտարների Խորհրդում վարոշում են՝

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Տեղական խորհրդագներին իրավունք և վերապահվում սահմանել հետևյալ հարկերն և տուրքերը՝
ա) փոխադրական միջոցներից գանձվող հարկ.
բ) քաղաքներում անամնից գանձվող հարկ.
զ) տուրք այնպիսի ձեռնարկություններից, վորոնք սպառման տեղում բաց են թողնում կերպիկուրներ և գոգելից խմբիչքներ, և հյուրանոցներից **).
դ) միանվագ տուրք շարժական առևտորից.
յի) տուրք հանդեսներից և զվարճություններից.
շ) տուրք այնպիսի անձերից, վորոնք իրավունք չունեն կատարելու գյուղական կատարածուների պարտականությունները:

[1933 թ. մարտի 27-ին (Վ.ՍԽՀ Ո. Ժ. 1933 թ. № 10, Խոդ. 141)]:

II. ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԸ

2. Փոխադրական միջոցներից գանձվող հարկով հարկատվաւ են ֆիվիկական և մասնավոր իրավական անձանց պատկանող ատորներ բերվող փոխադրական միջոցները՝ անձնական կարիքների համար ոգտագործվող հեծ-

*) Վորոշումը կերպիկության և դրված 1930 թ. հոկտեմբ. 1-ից [Վ.ԿԳԿ և Վ.ՍԽՀ ձկն 1932 թ. հունիսի 14-ին (Վ.ՍԽՀ Ո. Ժ. № 15, հոդ. 179)].

**) Ե-ին հոդ. ող կերպը նույն խմբագրությամբ կերպիկության և դրված 1933 թ. մարտի 1-ից [Վ.ՍԽՀ Ո. Ժ. № 10, հոդ. 142)].

կան և լծկան ձիյերը, բ) ձիյեր, վարոնք պահվում են ուղևորներ փոխադրելու համար, գ) ձիյեր, յիղներ, ցուլեր, գոմեշներ, ջորիներ, ուղտեր, վարոնք պահվում են բեռներ կրելու համար, դ) ինքնաշարժ կառքեր, ավտոմոբիլներ, մոտորավոր նավակներ, մոտոցիկլներ, յե) նավակներ, լաստանավեր և հեծանիվներ:

3. Փոխադրական միջոցներից գանձվող հարկի առավելագույն կոպարաներ սահմանելու համար Վրաստանի ՍԽՀ վայրերը, նայելով նրանց անտեսական կարսղությանը, բաժանվում են 4 կատեգորիայի. առաջին կատեգորիային պատկանում են Թիֆլիս, Բաթում, Սովում և Քութայիս քաղաքները. բ) յերկորդին—Ծխինվալ, Սղնախ, Թելավ, Գորի, Բորժոմ, Ախարցխա, Ճիւթուրի, Խոնի, Սամտրեղի, Սենակի, Զուգդիդի, Փոթի, Ողուրզելքաղաքները. յերրորդին—մնացած քաղաքները և քաղաքային տիպի ավանները. չորրորդին—գյուղական վայրերը.

[1931 թ. պատմության 18-ին (Ո. Ժ. 1931 թ. № 18, հոդ. 195)] *):

4. Սահմանել փոխադրական միջոցներից գանձվող հարկի առավելագույն կոպարաներ Յ-րդ հոդ. նշան վայրերի կատեգորիաների համար, ուղւրվիներով:

ԱՐԱՐԱԿԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ

	Վ. Ա. Յ. Բ. Բ. Հ. Հ.			
	1-ին կատ.	2-րդ կատ.	3-րդ կատ.	4-րդ կատ.
Են անձնա-	200	175	150	100
փոխադրելու				
բժիշկություն	150	120	100	80
բժիշկություն	100	100	80	60
առավել յու-	100	100	80	60
նավեր՝ յու-	60	40	30	20
առավել յու-	30	25	20	15
առավաստա-				
ներ՝ յու-	25	20	15	10
ից	20	18	15	10
յուրեց . .	20	18	15	10
	125	100	60	30

5. Փոխադրական միջոցներից գանձվող հարկից ազատվում են՝

ա) աշխատելու նորմակ հասակ չառած անասունները՝ մինչև յերեք տարեկան ձիյերը, յեղները, զոմեղները, ջորիները և եղերը և մինչև 4 տարեկան ուղղերը.

բ) այնպիսի անձանց փոխադրական միջոցները, վորոնց հիմնական գրազմունքը գյուղատնտեսությունն ե, յեթե կառապանությունը նրանց համար միայն ոժանդակ լրացմունք ե և կատարվում է այնպիսի վայրերում, վորտեղ անց և կացնվում հարկում միասնական գյուղատնտեսական հարկով, յեթե միաժամանակ նրանց ամրազջ յեկամուտը հարկված է միասնական գյուղատնտեսական հարկով, սակայն հիշյալ փոխադրական միջոցները հարկվում են փոխադրական միջոցներից գանձվող հարկով, յեթե կառապանությունը կատարվում է, թեև վորոշ ոեզնի ընթացքում, այնպիսի վայրում, վորտեղ չի անցկացնվում հարկում գյուղատնտեսական հարկով.

գ) աշխատանքի հերոսներին, տաժանակիր աշխատանքի նախկին քաղաքական գատապարտվածների և աքսորվածների և հին բալեկինների ընկերությունների անդամներին պատկանող փոխադրական միջոցները, յեթե այս միջոցները ուղարկված գործ են բացառապես այս անձանց և նրանց ընտանիքների կարիքների համար.

դ) պերսոնալ թոշակառուներին պատկանող փոխադրական միջոցները յեթե նրանք գործ են ածվում թոշակառուի և նրա ընտանիքի անձնական կարիքների համար.

յի) միլիցիայի վարչատնտեսական և ոպերատիվ շարային կազմի, ուղղիչ-աշխատանքային հիմնարկությունների վարչատնտեսական կազմի աշխատավորներին և նրանց ընտանիքներին պատկանող մեկից վոչ ավելի ձիյերը, յեթե նրանք գործ են ածվում տնտեսության կարիքների համար և նույն անձանց պատկանող մեկից վոչ ավելի հեծանիվները.

դ) ավտոմոբիլազմի զարգացմանն և Վրաստանի ՍԽՀ ճանապարհների բարելավմանն աջակցող ընկերության («Ավտոդրո») անդամներին պատկանող մուտքիլեաններն և հեծանիվները, յեթե նրանք գործ են ածվում բացառապես տերերի անձնական կարիքների համար.

ե) այն ստարերկրյա քաղաքացիների ավտոմոբիլներն և մոտոցիկլուները, վորոնք ստարերկրյա ավտոմոբիլային ընկերությունների անդամներ են և գտնվում են Վրաստանի ՍԽՀ տերիտորիայի վրա ավտոմոբիլների ուղղարժության մասին Փարիզի միջազգային կոնվենցիայի հիման վրա (ԽՍՀ Միության Ռ. Ժ. 1926 թ. № 23, հոդ. հոդ. 152 և 153) վոչ ավելի քան ժամանելուց 12 ամսվա ընթացքում, յեթե միենույն ժամանակ համապատասխան արտոնությունը վերապահված է ԽՍՀ Միության քաղաքացիներին այն պետության որենքներով, վորի քաղաքացիներ են հանդիսանում նշած ստարերկրյացիները:

[1931 թ. պատռուի 18-ին (Ռ. Ժ. 1931 թ. № 18, հոդ. 196), 1931 թ. սեպտեմբերի 27-ին (Ռ. Ժ. 1931 թ. № 21, հոդ. 226), 1932 թ. սեպտեմբերի 13-ին (Ռ. Ժ. 1932 թ. № 23, հոդ. 226):]

III. ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԱՆԱՍՆԻՑ ԳԱԽՎՈՇ ՀԱՐԿ

6. Անասնից գանձվող հարկվող քաղաքներում հարկվում են ստորև թված ֆիզիկական և մասնավոր իրավական անձանց պատկանող ընտանի անասունները՝ 1) 2 տարեկանից վեր հասակ ունեցող յեզները, կովերը, յերինչները. 2) 3 տարեկանից վեր ցուկերն և դոմեշները. 3) 3 տարեկանից վեր եշերը, ջորիները. և 4 տարեկանից վեր ուղտերը.

Ծանոթություն 1. — Նշած հարկով հարկվում ե այն ընտանի անասունը, վորը չի ոգտագործվում սայլապանության համար,

Ծանոթություն 2. — Մատնանշած հարկով հարկվում ե և այն ընտանի անասունը, վոր վորոշ սեղոնում վոչ-սայլապանության համար շահագործելու համար բերվում են այնպիսի քաղաքներ, վորուեղ բնակչությունը չի հարկվում միասնական դյուզատնտեսական հարկով:

7. Մահմանվում են նշած հարկի հետեւյալ տարեկան առավելագույն կուպարները անասնի յուրաքանչյուր գլխից, ուռելիներով՝

ա) Թիֆլիս, Բաթում և Սուխում քաղաքներում 24

բ) Գութայիս և Փոթի քաղաքներում 20

շ) Ալ քաղաքներում 10

8. Տեղական խորհուրդներին իրավունք ե վերապահնվում սահմանել. հիշյալ հարկի տարբեր կոպարներ այն սահմաններում, վոր նշած են 7-րդ հոդվածում, նայելով հարկ վճարողի սոցիալական վիճակին և անդական պայմաններին:

9. Անասնի հարկից քաղաքներում աղատվում են՝

ա) այն անասունը, վոր հարկված և միասնական դյուզատնտեսական հարկով.

բ) աշխատանքի հերոսներին, տաժանակի տշխատանքի նախկին քաղական դատապարտվածների և աքսորվածների ու հին բոլեփկների ընկերությունների անդամներին պատկանող անասունը, յեթե անասունը զորագրվում և բացառապես այս անձանց կամ նրանց ընտանիքների կարիքների համար.

գ) կաղրային, շարքային և իշխանապետական կազմի (բացի յերկարատև արձակուրդ ստացելներից) զինվորական ծառայողներին պատկանող անասունը —մի գլխից վոչ ավելի.

դ) միլիցիայի սպերատիվ շարային և վարչատնտեսական կազմի, ուղղիչ-աշխատանքային հիմնարկությունների վարչատնտեսական կազմի աշխատավորներին և նրանց ընտանիքներին պատկանող —մի գլխից վոչ ավելի անասունը:

[1931 թ. սեպտեմբերի 27-ին (Ո. Փ. 1931 թ. № 21, հսկ. 223). 1932 թ. սեպտեմբերի 18-ին (Ո. Փ. 1932 թ. № 28, հսկ. 226):]

IV. ՀԱՐԿ ԱՅՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՎՈՐՈՆՔ ԲԱՑ ԵՆ ԹՈՂՆՈՒՄ ՏԵՂՈՒՄ ՍՊԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ՅԵՎ ՎՈԳԵԼԻՑ ԽՄԻԶՔՆԵՐ, ՅԵՎ ՀՑՈՒՐԱՆՈՑՆԵՐԻՑ *)

10. Հարկին յենթակա յեն պանդոկները, ճաշարանները, գարեջրի խառնությունները և ամեն տեսակ այն ձեռնարկությունները, վորոնք տեղում սպասելու համար բաց են թողնում կերակուրներ և վոգելից խմիչքներ, ինչպես որինակ՝ գինի, ողի, կոնյակ, գարեջուր և այլն, և հյուրանոցները:

[1933 թ. մարտի 27-ին (Վ.Սեհ. Ո. Ժ. 1933 թ. № 10, հոդ. 141)]:

11. Հարկը գանձվում է բաց թողած կերակուրների և խմիչքների և հյուրանոցների կողմից մատուցած ծառայությունների գնի վրա դրվող տուկոսային հավելումի ձեռվ:

[1933 թ. մարտի 27-ին (Վ.Սեհ. Ո. Ժ. 1933 թ. № 10, հոդ. 141)]:

12. Տուրքը սահմանվում է տոկոսային հավելումի ձևավ բոլոր այն գումարից, վորատացվում և հյուրանոցների կողմից ցույց տված ծառայությունների և հաճախորդներին բաց թողած կերակուրների և խմիչքների համար, հետեւյալ չափերով՝ հասարակական սննդի սիստեմի ձեռնարկություններից 80% , հյուրանոցներից և այլ ձեռնարկություններից 10% չափավ:

[1933 թ. մարտի 27-ին (Վ.Սեհ. Ո. Ժ. 1933 թ. № 10, հոդ. 141)]:

13. Դուրս և հանված:

[1933 թ. մարտի 27-ին (Վ.Սեհ. Ո. Ժ. 1933 թ. № 10, հոդ. 141)]:

14. Տուրքից ազատվում են այն պանդոկները, ճաշարաններն և այլ ոժանդակ ձեռնարկությունները, վորոնք բաց չեն թողնում վոգելից խմիչքներ:

[1933 թ. մարտի 27-ին (Վ.Սեհ. Ո. Ժ. 1933 թ. № 10, հոդ. 141)]:

15. Տուրքի գանձումը դրվում է ձեռնարկությունների վարիչների և տերերի վրա, վորոնք հինգ որվա տուրքի ստացված գումարները հինգորյակ անցնելուց յերկու որվա ընթացքում պարտավոր են հանձնել պետական բանկի համապատասխան գանձարկներին:

[1933 թ. մարտի 27-ին (Վ.Սեհ. Ո. Ժ. 1933 թ. № 10, հոդ. 141)]:

16. Տուրքը ժամանակին չհանձնելու համար տույժ և բարձրվում հարկերի գանձման կանոնադրության համաձայն Բացի այդ, տուրք չգանձելու, կամ ավելի պակաս չափով գանձելու, նաև ժամանակին պետական բանկի գանձարկին չհանձնելու համար ձեռնարկությունների վարիչների կամ տե-

*) IV. հոդվածը (հոդ. 10—12 և 14—16) կիրարկության և դրված 1933 թ. մարտի 1-ից (Ո. Ժ. 1933 թ. № 10, հոդ. 141).

բերի վրա, համապատասխան ռայոնական կամ քաղաքային ֆինանսական բերի վրա, համապատասխան ռայոնական կամ քաղաքային ֆինանսական բերի վրա պատճենագույն կամ անհաջող դաշտականք մինչև հինգ հարյուր ռ. չափով:

[1983 թ. մարտի 27-ին (ՎԱԽ Ռ. Փ. 1983 թ. № 10, հայ. 141):]

Վ. ՄԻԱՆՎԱԿ ՏՈՒՐՔ ՇԱՐԺԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻՑ

17. Շարժական առևտրից միանվագ տուրքով հարկվում ե գետնի վրա, վոտի վրա, սայլերից կատարվող առևտուրը փողոցներում, հրավարակներում, վուկաներում, յերկաթուղու կայարաններում և շոգենավային նավամատույցներում կամ այլ տեղերում թե քաղաքներում, թե քաղաքների բնակությունից գուրս այն գեղգում, յերբ առևտուր անողները չունեն համապատասխան արհեստային վավերագրեր (տոմարագրման հայտարարությունների վավերացրած պատճեններ):

Ծանոթություն.—Շարժական առևտրից միանվագ տուրք վճարելու չափանիւմ պատում գետնի, վոտի վրա կամ սայլերից սիստեմատիկ կերպով առևտուր անող անձանց արհեստահարկ և տուզանք վճարելուց, յերբ նրանք առևտուր են անում առանց արհեստային վավերագրի:

18. Շարժական առևտրից միանվագ տուրքի չափը սահմանվում է՝

1) Գետնի վրա, վոտի վրա (ձեռքից, թարախներից, զամբյուղներից կամ այլ տեղերից), վոր տեղափոխվում են ամբաղջ ապրանքի հետ մի մարդու միջոցով)—յուրաքանչյուր որվա համար վոչ ավելի քան տնայնապորձների և արհեստավորների համար սահմանած կարգի արհեստահարկի տարեկան ամուր կոպարի 3°/օ, այն ե՝

ա) Թիֆլիսում—75 կոպ.

բ) Բաթում, Սուլիում և Թութայիս քաղաքներում—60 կոպ.

գ) այլ քաղաքներում և քաղաքային տիպի վայրերում—40 կոպ.

դ) գյուղական վայրերում—20 կոպ.

2) Սայլից կատարվող առևտրի համար (արարաներից, սայլերից և ուժանդակ ուժի միջոցով տեղափոխվող այլ տեղերից) վոչ ավելի քան տնայնապորձների և արհեստավորների համար սահմանած II կարգի արհեստահարկի տարեկան ամուր կոպարի 3°/օ, այն ե՝

ա) Թիֆլիս ք.—2 ռ.

բ) Բաթում, Սուլիում և Թութայիս քաղաքներում—1 ռ. 50 կ.

գ) այլ քաղաքներում և քաղաքային տիպի ավաններում—1 ռ.

դ) գյուղական վայրերում—50 կոպ.

3. Վաճառելու համար քաղաք բերած անասնի համար—յուրաքանչյուր գլխից վոչ ավելի քան արհեստավորների և անայնագործների համար սահմանած ԱՄ կարգի արհեստահարկի տարեկան կոպարի 3 %, այն եւ

ա) թիֆլիս ք.—3 ռ.

բ) Բաթում, Սուխում և Թութայիս քաղաքներում—2 ռ. 50 կ.

գ) այլ քաղաքներում և քաղաքային տիպի ավաններում—1 ռ. 50 կ.

դ) գյուղական վայրերում—75 կոպ:

Ծանոթություն: —Կորանտեսությանների շարժական առերից գանձվող միանվագ տուրքը չի կարող ավելի լինել քան առեսրի յուրաքանչյուր որվա համար՝

սայլից առեսուր անելիս—1 ռուր. յուրաքանչյուր սայլից, գետնից կամ վասի վրա առեսուր անելիս—20 կոպ., խոշոր անասնի գլխից 1 ռ., մանր անասնի գլխից—50 կոպ.։

[1932 թ. մայիսի 26-ին (Ո. Ժ. 1932 թ. № 13, հոդ. 90), 1932 թ. ոգոստոսի 22-ին (Ո. Ժ. 1932 թ. № 21, հոդ. 202)]:

19. Շարժական առեսուրի միանվագ տուրքից ազատվում ևն՝

ա) այն անձինք, վորոնք առեսուր են անում ունենալով սահմանած արհեստային վավերագրեր.

բ) կորանտեսները և աշխատավոր միանձնյա գյուղացիները, վորոնք առեսուր են անում իրենց գյուղատեսական արտադրության մթերքներով.

գ) կորանտեսները և աշխատավոր միանձնյա գյուղացիները, վորոնք վաճառում են հատապուղ, սունկ, ծաղիկներ, ձուկ, վոր, վոր ձեռք են րերել իրենց աշխատանքով.

դ) կորանտեսները և աշխատավոր միանձնյա գյուղացիները, վորոնք վաճառում են իրենց պատրաստած փայտն և ածուխը, յեթի նրանք ունեն ընկալագրեր կոճղային տուրք վճարելու մասին.

յե) կորանտեսներն և աշխատավոր միանձնյա գյուղացիները, վորոնք վաճառում են իրենց սեփական անասունը.

զ) գյուղական տնայնագործները, վորոնք վաճառում են իրենց արտադրության կերպածքները, յեթի նրանք ունեն հարկային մարմիններից ստացած հավաստագրեր.

ե) սոցիալական ապահովության իրավունք կամ սոցիալական ապահովության կարգով ապահովություն ունեցող ինվալիդները, կույրերն և խուլ ու մունջերը, վորոնք գտնվում են սոցիալական ապահովության հաշվառքում և առեսուր են անում գետնի վրա կամ վոտի վրա.

լ) այն անձինք, վոր գետնի կամ վոտի վրա վաճառում են իրենց սան բանեցրած իրերը.

թ) այն անձինք, վորոնք վարձավճար են ավել շուկայում տեղի համար. [1932 թ. մայիսի 26-ին (Ո. Ժ. 1932 թ. № 18, հոդ. 99), 1932 թ. օգոստոսի 22-ին (Ո. Ժ. 1932 թ. № 21, հոդ. 202):]

VI. ՀԱՐԿ ՀԱՆԴԵՄՆԵՐԻՑ ԵՎԼ ԶՎԱՐՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

20. Հանդեմներից և զվարձություններից հարկը գանձվում և քաղաքաներում, քաղաքային տիպի ավաններում, ամարանցներում և կուրորտային վայրերում կազմվող հանդեմներն ու զվարձությունները հաճախողներից տուվային հավելման միջոցով մուտքի տոմսակների գնի վրա կամ հարկի հատուկ կոպար սահմաններով:

21. Հանդեմներից և զվարձություններից գանձվող հարկը սահմանվում է հետևյալ ամուր կոպարներով՝

ա) դրամատիկական, ոպերային (սույն թվում և կոմիկական ոպերաների) և բալետային ներկայացումների, սիմֆոնիական կատարումների, դեղաբվեստական և այլ ցուցահանդեսների համար— $10^0/0$ տոմսակի գնից:

բ) համերգների, գրականական և յերաժշտական ցերեկույթների և յերեկույթների համար— $15^0/0$ տոմսակի գնից.

գ) սպորտիվ մրցումների, հասարակական խաղերի կրկեսների, (բացի թիֆլիսի պետական կրկեսից) և մեքենայական թատրոնների, (բացի կինոմատոգրաֆներից) տոռոսակի գնի— $20^0/0$ *):

դ¹⁾) Թիֆլիսի պետական կրկեսի համար—տոռոսակի գնի— $10^0/0$ *),

դ²⁾) Կինոմատոգրաֆների համար—տոռոսակի գնի— $10^0/0$ **):

յե) Թեթև ժանրի ներկայացումների համար (ոպերետաների, թեթև կատակերգությունների, ֆարսերի, կարարքների, մինյատուրների և այլն)—տոռոսակի գնի 60⁰/0.

զ) Թեթև ժանրի ներկայացումների համար սեղաններով և այնպիսի հիմնարկների համար, վորտեղ լոտոյի խաղ և տեղի ունենում, յուրաքանչյուր հաճախորդից—30 կոպ.

ե) մասկարագների և պարի յերեկույթների համար—տոռոսակի գնի $100^0/0$.

ը) պետական ձիաբուծության կողմից կազմակերպվող կառարշավների և ձիարշավների համար—մուտքի տոմսի— $25^0/0$.

թ) տոսալիզատոր խաղացողների համար—լրացուցիչ— $45^0/0$.

[1931 թ. ապրիլի 27-ին (Ո. Ժ. 1931 թ. № 10, հոդ. 113). 1931 թ. օգոստոսի 18-ին (Ո. Ժ. 1931 թ. № 18, հոդ. 197). 1933 թ. ապրիլի 14-ին (Ո. Ժ. 1933 թ. № 12, հոդ. 163):]

*¹⁾ 21-րդ հոդ. «զ» կետը սույն խմբագրությամբ կիրարկության և զըված 1933 թ. հունվարի 1-ից և «զ²⁾» (ՎՍԽՀ Ո. Ժ. № 1, հոդ. 163).

**²⁾ 21-րդ հոդ. «զ» կետը սույն խմբագրությամբ կիրարկության և զըված 1931 թ. ապրիլի 15-ից (ՎՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. 18, հոդ. 197).

22. Հարկը դանձվում ե մուտքի տոմսակի արժեքից անբաժան;

23. Հարկից ազատվում են հետևյալ հանդեսների և զվարճությունների հաճախորդները՝

բ) դիտական բնույթ կրող դասախոսությունների և ցուցահանդեսների հաճախորդները.

գ) վերացված և
յ) վերացված և

դ) քաղաքակրթական նշանակություն ունեցող առանձին հանդեսների, մասնավորապես կինո-սեանսների, ուր ցուցադրում են բացառապես քաղաքակրթական ֆիլմեր, վորոնց ցուցակը սահմանում է Վ.Ս.ԽՀ Փինանսների ժողովրդական կոմիտարիատը, համաձայնության գալով Վ.Ս.ԽՀ լուսավորության ժողովրդական կոմիտարիատի և Կարմիր խաչի և Կարմիր կիսալուսնի Համավարացական ընկերության կոմիտեյի հետ, և քրոնիկի.

ե) զինվարական ծառայողների և նրանց ընտանիքների համար կաղաքակրպող փակ հանդեսների և զվարճությունների.

ը) բանվորների և ծառայողների կազմակերպությունների և արհեստական միությունների կողմից բացառապես իրենց անդամների և նըրանց ընտանիքների համար կազմակերպվող հանդեսների և զվարճությունների.

թ) հատկապես մանուկների համար կազմակերպվող հանդեսների.

ժ) առանձին հանդեսների, վոր կազմակերպում են զպրոցներում, հիվանդանոցներում, ապահովաններում, կալանավայրերում—աշակերաների, հիվանդների, պատուղարվողների և կալանավորների համար.

ժա) հանդեսների և զվարճությունների, վոր կազմում են անապահուն մանուկների ոգնություն հանձնաժողովները, առանց ձեռնարկող-անարապիկնորների մասնակցության.

ժբ) այն հանդեսների և զվարճությունների, վոր կազմակերպում են դյուլացու տները առանց ձեռնարկող-անարապիկնորների մասնակցության.

ժգ) հանդեսների և զվարճությունների, վոր կազմակերպում ե միջազգային կարմիր ստագիտնի կառուցանողների ընկերությունը, բացի կարմիր ստագիտնի տերթիսորիայից դուրս կինո-թատրոնների.

ժյե) սպորտիվային-ցուցադրական հանդեսների, վոր կազմակերպում են ֆիզիկակառակային հանրապետական, ույացնական և քաղաքային խորհուրդները, արհեստական միությունների սպորտիվային հիմնարկությունները և բանվորագուղացիական Կարմիր Բանակի սպորտիվային հիմնարկությունները:

Բացի այդ ազատվում են՝
ժղովները, անցաթղթերը (կոնտրմարկաները), վոր կուլտ-շե-
ֆության կարգով արվեստների աշխատավորների միության Համամիութե-
նական կենտրոնական վարչության (Վսեռարիսի) բաժանմունքները տալիս
են զինվորական ծառայողներին և նրանց ընտանիքներին:

[1932 թ. մայիսի 13-ին (ԱՍԽ Ռ. Ժ. 1932 թ. հ. 13, հոդ. 108):]

24. Վճարումի հանդեսների և զվարճությունների պատասխանատու
կարգադրիչները, վորոնք հաճախորդներ են ներս թողել առանց գանձելու
հասանելի հարկը կամ դանձելով ավելի պակաս չափով քան պետք է, յեն-
թարկվում են դրամական տուգանքի հարկի շվճարած կամ պակաս վճարած
գումարի յերեսնապատիկից վոչ ավելի չափով:

25. Հանդեսներից և զվարճություններից հարկից զբնավոր դումարնե-
րից (թե հիմնական, թե տուգանքներից) հատկացվում են 60% համապա-
տասխան խորհուրդների բյուջեներին, իսկ 40% մուշկում և Կարմիր խաչ և
կարմիր կիսարտւին համավրացական ընկերության կենտրոնական կոմիտեի
ընթացիկ հաշվի մեջ:

VII. ՏՈՒՐՔ ԱՅՆ ԱՆՁԵՐԻՑ, ՎՈՐՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒ-
ՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Գյուղական խորհուրդներին իրավունք ե վերապահվում սահմանել
և գանձել հարկ այնպիսի անձերից, վորոնք իրավունք չունեն կատարելու
գյուղական կատարածուների պարտավորությունները, ընտրական իրավուն-
քից զրկված լինելու պատճառով:

27. Հարկի կոպարը յուրաքանչյուր անձից սահմանվում է վոչ ավելի
քան 30 ոուր, յեթե տվյալ գյուղում գյուղական կատարածուների պարտա-
կանություններ կատարելը սահմանվում է յերկու ամիս ժամանակով։ իսկ
այն գյուղերում, ուր գյուղական կատարածուների պարտականություններ
կատարելը սահմանվում է յերկու ամիսից պակաս ժամանակով, տուրքի չա-
փը համապատասխանութեն իջեցվում է, նաշվելով 7 ո. 50 կոպ. գյուղական
կատարածուի պարտականություններ կատարելու յուրաքանչյուր յերկու
շարաթվու համար։

28. Հարկը գանձվում է այն ժամանակ, յերբ հասնում է գյուղական
կատարածուի ուշշտուն կատարելու հերթը։

VIII. ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՑԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎՈՐՈՇՈՒՄ ԿԻՐԱԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱ-
ՑԱՆԳՆԵՐ

29. Տեղական հարկերի և տուրքերի վերալ մասին հրահանգը, սոորեն նշան բայցառաւթյամբ, փինանսների ժողովրդական կոմիտարիալը

ԱԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.




FL0002292

Հանդեպներից և զվարճություններից (հատված VI) գահնձվող տեղական հարկի մասին վորոշումը կիրառելու հրահանգը հրատարակում եւ ՎԱԽՀ ֆինանսների Փողովրդական կոմիսարիատը, համաձայնության գալով ՎԱԽՀ լուսավորության Ժողովրդական կոմիսարիատի (իսկ ինքնավար հանդիսապետություններում և ինքնավար մարզում—պատշաճ կենտրոնական գործադիր կոմիտեների) և Կարմիր խաչի ու Կարմիր կիսալուսնի Համավրացական ընկերության կենտրոնական կոմիտեյի հետ:



Հ 24123

[034.]



807

Г.П.Б. в Лнгра
Г. 1995 г.
Акт № 929